



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՆՈՐ ՋՈՒԴԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»ՈՒ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 12 Յունիսի երեկոյեան, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Առաջնորդարանի հովանիին տակ գործող «Նոր Ջուղայի Բարեկամներ» յանձնախումբը, որ եկած էր շնորհաւորելու Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքը եւ ծանօթացնելու իր նոր անդամները:

Այս յանձնախումբը կազմուած էր աւելի քան երեք տարի առաջ, գլխաւորապէս Նոր Ջուղայի մշակութային ժառանգութեանց պահպանման ու տարածման մտասուեռումով: Յանձնախումբը Առաջնորդ Սրբազանին ներկայացուց իր աշխատանքներուն ընդհանուր պատկերը, ապա նաեւ ծանօթացաւ Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի բաժանմունքներուն ու ծառայական աշխատանքի դաշտերուն:

Հրաժեշտի պահուն, հիւր յանձնախումբը Առաջնորդ Սրբազանին իբրեւ նուեր յանձնեց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը պատկերող գեղանկար մը:

PRELATE WELCOMES THE FRIENDS OF NEW JULFA COMMITTEE TO THE PRELACY

On the evening of Tuesday, June 12, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the Friends of New Julfa committee to the Prelacy. The visit served to familiarize the committee with the new building and also to introduce the new members to the Prelate.

This committee was established over three years ago which the purpose of preserving and promoting the traditions of the New Julfa region. During the meeting the Prelate gave the members an overview of the work being carried out and of the different departments that comprise the Prelacy. The meeting concluded with the committee presenting the Prelate with an artwork depicting the Holy Savior Monastery of New Julfa.